

Հարգելի պարոն վարչապետ,

Սույնով ներկայացնում եմ մի հիմնախնդիր, որին մեր հայրենակիցները հաճախ բախվում են Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության նպատակով ժամանելիս, մասնավորապես, իրենց անձնական օգտագործման իրերն ու տրանսպորտային միջոցներն այլ պետությունից ՀՀ մաքսային սահման առանց մաքսատուրքի վճարման ներմուծելիս:

Հարցի էությունը կայանում է նրանում, որ դեռևս 2018 թվականի ապրիլին Հայաստանում տեղի ունեցած թավշյա, ոչ բռնի հեղափոխությունից հետո մեր Սփյուռքի բազմաթիվ հայրենակիցներ, հետևելով նաև Ձեր կոչին ու հորդորին, որոշել են վերադառնալ և մշտական բնակություն հաստատել Հայաստանում՝ ապրել ու արարել իրենց պատմական հայրենիքում: Այդ նպատակով, նրանցից շատերն արդեն ժամանել են Հայաստան և ձեռք բերել Հայաստանում մշտական հաշվառում, այժմ ցանկանում են, որպես հայրենադարձներ, առանց բյուրոկրատական քաշքշուկների և մաքսային տուրքեր վճարելու, իրենց անձնական օգտագործման իրերն ու տրանսպորտային միջոցը տեղափոխել կամ ներմուծել Հայաստանի Հանրապետություն: Սակայն ՀՀ մաքսային ոլորտի օրենսդրության բարդ ու խճճված ձևակերպումները, ինչպես նաև սահմանափակող նորմերը հանգեցրել են նրան, որ նրանցից շատերը չեն կարողանում օգտվել այդ արտոնությունից: Մեր Սփյուռքի հայրենակիցները ոչ միայն չեն կարողանում ընկալել ՀՀ օրենքների ձևակերպումները, այլ նաև բարձրացնում են տրամաբանական հարցեր, որոնց պատասխանները մեր օրենսդրությունը չի տալիս:

Նախևառաջ, ՀՀ պետական լիազոր մարմին ճանաչված ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, վերոգրյալ հարցերով մեր հայրենակիցներին տրամադրել է ՀՀ օրենսդրական ակտերի հղումներով, բարդ ստորադասական նախադասություններով լի մի քանի էջանոց պատասխաններ, որոնք իրենցից ներկայացնում են իրազեկման թերթիկ՝ բացառապես այդ ոլորտում պրակտիկ գիտելիքներ ունեցող անձանց համար: Բնականաբար, մեր հայրենակիցները, որոնք ծնվել և մեծացել են արտերկրում և դեռևս չեն տիրապետում արևելյան հայերենին այն մակարդակով, որ ի վիճակի կլինեն գերազանց ընկալել ՀՀ օրենսդրության, առավել ևս ԵՏՄ մաքսային օրենսգրքի մասին 11/04/2017թ. պայմանագրի պահանջները, չեն ըմբռնել դրա բովանդակությունը: Նույն վիճակում են գտնվում նաև մեր այն հայրենակիցները, որոնք արտագաղթել են Հայաստանից վերջին տասը տարիներին: Մեր կողմից բացատրական աշխատանքներ տանելուց հետո, նրանք բացարձակ չեն ընդունում այդ ակտերով սահմանված սահմանափակող դրույթները և բյուրոկրատական ենթատեքստ են տեսնում դրա տակ:

Ի դեպ, մենք նույնպես արձանագրում ենք, որ այս ոլորտի իրավական ակտերի պահանջները հասկանալի ու մատչելի լեզվով ներկայացված չեն շահագրգիռ կողմ հանդիսացող հայրենադարձի համար: Բացի այդ, նրանք բացարձակ տեղյակ չեն (իրազեկված չեն) «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջների մասին, որպեսզի գործեն դրա տառին ու ոգուն համապատասխան՝ մինչև ՀՀ ժամանելն ու ՀՀ լիազոր մարմին համապատասխան դիմում ներկայացնելը:

Երկրորդ, մեր հայրենակիցներից շատերը վերջին տարիներին հաճախ են այցելել Հայաստան և այնպես է ստացվել, որ **վերջին հինգ տարվա ընթացքում, յուրաքանչյուր տարվա մեջ 181 և ավելի օր գտնվել են Հայաստանում**, այնուհետև վերադարձել իրենց մշտական բնակության երկիր: Իսկ **«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի (ընդ. 17.12.2014թ. ՀՕ-241-Ն, 249-րդ հոդված, 13-19-րդ կետեր)<sup>1</sup> պահանջները** գրված են միայն մաքսային աշխատողի համար, իսկ շահագրգիռ կողմը՝ սույն դեպքում հայրենադարձը, դրանց մասին տեղեկանում է միայն այն ժամանակ, երբ դիմում է ՀՀ լիազոր մարմին՝ մաքսային արտոնությունից օգտվելու համար: Դրա հետ մեկտեղ էլ նրանք կրում են ֆինանսական կորուստներ, քանի որ մինչև դիմում ներկայացնելը, պետք է իրենց անձնական օգտագործման իրերն ու տրանսպորտային միջոցն արդեն իսկ ներմուծած են լինեն ՀՀ մաքսային տարածք, իսկ մերժում ստանալուց հետո՝ ստիպված են լինում կամ վճարել սահմանված մաքսատուրքը կամ այդ ներմուծած ապրանքների ու տրանսպորտային միջոցի հետ միասին վերադառնալ այն պետություն, որտեղից ժամանել են Հայաստան:

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գրավոր պարզաբանման՝ հայրենադարձը պետք է ճանաչվի **«ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձ»** և դրանից հետո միայն իրավունք ձեռք բերի օգտվել մաքսային արտոնությունից, եթե իհարկե կպարզվի, որ դիմողը **Հայաստանում չի բնակվել 181 օր և ավելի**, այլապես նրա դիմումը ենթակա է լինելու մերժման: Սակայն, հարկ է նկատել, որ նշյալ օրենքով հստակեցված չէ, թե ինչպե՞ս, ի՞նչ կարգով, ի՞նչ ժամկետում և ո՞ր մարմինն է հայրենադարձին **«ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձ»** ճանաչում և ինչպե՞ս է որոշում նրա նպատակը:

Այսինքն եթե մեր հայրենակիցները ցանկություն են հայտնել մշտական բնակություն հաստատել Հայաստանում և օգտվել մաքսային արտոնությունից, ապա պետք է ի սկզբանե տեղեկացված լինեն, որ իրենք **վերջին հինգ տարվա ընթացքում, յուրաքանչյուր օրացուցային տարվա մեջ ընդհանուր առմամբ 181 օր և ավելի չպետք է գտնված լինեն ՀՀ տարածքում**, այլապես չեն ճանաչվի Հայաստանում մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք: Հետաքրքիր է, այս մասին մեր հայրենակիցը որտեղի՞ց պետք է տեղեկացված լիներ, երբ նրա՝ ՀՀ-ում մշտական բնակություն հաստատելու իր նպատակը (որոշումը) ծագել է 2018 թվականի ապրիլին կամ 2019 թվականին, սակայն

---

<sup>1</sup> 13. ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք են համարվում մշտական բնակության ժամանելու օրվան նախորդող ժամանակահատվածում ՀՀ տարածքից դուրս **առնվազն հինգ տարի անընդմեջ մշտապես բնակված** ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ հարկադիր տեղահանվածների և փախստականների, որոնց համար ՀՀ տարածքից դուրս առնվազն հինգ տարի անընդմեջ մշտապես բնակվելու հանգամանքը հաշվի չի առնվում:

14. Սույն օրենքի իմաստով՝ ՀՀ տարածքից դուրս մշտապես բնակված է համարվում այն անձը, որը դիտարկվող ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ բնակվել է **ՀՀ տարածքից դուրս 184 օր և ավելի**:

15. Սույն օրենքի իմաստով՝ ՀՀ տարածքում մշտապես բնակված է համարվում այն անձը, որը դիտարկվող ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում ընդհանուր առմամբ գտնվել է **ՀՀ տարածքում 181 օր և ավելի**:

16. ՀՀ տարածքից դուրս և ՀՀ տարածքում մշտապես բնակվելու հանգամանքը և ժամանակահատվածը որոշում է մաքսային մարմինը՝ Կառավարության լիազոր մարմնի կողմից մաքսային մարմինն պաշտոնապես տրամադրած՝ տվյալ ֆիզիկական անձի վերաբերյալ ՀՀ պետական սահմանը հատելու մասին տեղեկատվության հիման վրա:

17. ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց, այդ թվում՝ հարկադիր տեղահանվածների կամ փախստականների, անձնական օգտագործման գույքը կարող է ներմուծվել մշտական բնակության նպատակով **ՀՀ ժամանման օրվանից ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում**:

18. ՀՀ հաշվառում չունեցող ֆիզիկական անձանց համար ՀՀ մշտական բնակության ժամանման օր է համարվում **ՀՀ մշտական բնակության նպատակով ժամանելուց հետո՝ 180 օրվա ընթացքում, ՀՀ-ում հաշվառվելու օրը**:

19. ՀՀ մշտական բնակության ժամանելիս ՀՀ հաշվառում ունեցող ֆիզիկական անձանց համար ՀՀ մշտական բնակության ժամանման օր է համարվում **ՀՀ մշտական բնակության նպատակով ժամանելու օրվան հաջորդող 180 օրվա ընթացքում մաքսային մարմին գրավոր դիմելու օրը**:

վերջին հինգ տարիներին, յուրաքանչյուր դիտարկվող տարում Հայաստանում գտնվել է 181 օր և ավելի: Ինչպես նշել եմ արդեն, այս պայմանների ու ժամկետների մասին գործնականում նրանք տեղեկանում են միայն գրավոր դիմում ներկայացնելուց հետո:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ եմ համարում սույն գրությանը կից ներկայացնել ակնառու մեկ օրինակ, որով տեսանելի է դառնում սույն ոլորտի իրավական ակտերի պահանջների ոչ միայն խճճված ձևակերպումները, այլ նաև հակասությունը Ձեր՝ իբրև ՀՀ վարչապետի այն հայտարարությանն ու կոչին, ըստ որի՝ **«...Հայրենադարձությունը պետք է դառնա համահայկական օրակարգի առաջնային հարցերից մեկը, եթե ոչ ամենաառաջնայինը...»**, **«...Յուրաքանչյուր հայ պետք է տուն ունենա Հայաստանում և ՀՀ քաղաքացիություն...»**: Սակայն ինչպես փորձն է ցույց տալիս, այսօր մեր հայրենադարձը նույնիսկ իր խոհանոցային պարագաները չի կարողանում առանց մաքսատուրքի վճարման ներմուծել Հայաստան, նա փաստորեն չի ճանաչվում հայրենադարձ և «պատժվում է» նրա համար, որ ժամանակին 181 օր և ավելի գտնվել է Հայաստանում, և յուրաքանչյուր ներմուծվող ապրանքի համար նա պետք է մաքսատուրք վճարի: Բայց չէ՞ որ այս մոտեցումը հնարավոր է հիասթափեցնի մեր հայերանադարձ-հայրենակիցներին և ազդի նրանց որոշման փոփոխման վրա:

Ի դեպ, մեր շահառուի դիմումի կապակցությամբ, մեր կազմակերպությունը դիմել էր ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ պարզաբանումներ ստանալու ակնկալիքով, որի պատասխանը կցվում է: Ավաղ, պետք է նշեմ, որ այդ պարզաբանումները ևս չօգնեցին մեր շահառուին, որպեսզի նա օգտվի մաքսային արտոնությունից: Այնուհետև, օգնեցինք դիմումատուին համապատասխան դիմում կազմելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտե կրկին ներկայացնելու հարցում, որտեղից էլ ստացվել է մերժում: Համաձայն այդ մերժման՝ դիմողը չի պահպանել հիշատակված օրենքի պահանջները՝ նա վերջին հինգ տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր տարի ՀՀ տարածքում գտնվել է 181 օր և ավելի: Փաստորեն, պետք է լիներ հակառակը՝ դիմողը **181 օր և ավելի չպետք է գտնված լիներ Հայաստանում**:

Բացի վերոգրյալից, պետք է նշեմ, որ հիշատակված օրենքով հստակեցված չէ, թե ո՞ր մարմինն է դիմողին «...տեղափոխված անձ...» ճանաչում և ինչպե՞ս, ի՞նչ կարգով և ի՞նչ ժամկետում է տրամադրում այդ փաստը հավաստող փաստաթուղթը: Զանի որ միայն այս փաստը հավաստող փաստաթուղթը տրամադրվելուց հետո է միայն քաղաքացուն թույլատրվում դիմել մաքսային մարմին՝ համապատասխան արտոնությունից օգտվելու համար: Ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պարզաբանման՝ ենթադրվում է, որ քաղաքացին պետք է նախապես ստանա այդ հավաստող փաստաթուղթը, այնուհետև՝ դրա ստանալու ամսաթվից ոչ ուշ քան 18 ամսվա ընթացքում դիմում ներկայացնի լիազոր մարմին՝ մաքսային արտոնությունից օգտվելու համար:

Հաջորդ մտահոգիչ հարցը կայանում է նրանում, որ այս օրենքի պահանջներից մեկն էլ այն է, որ դիմողը պետք է մինչև իր համապատասխան դիմում ներկայացնելը, իր անձնական օգտագործման ապրանքները և մեկ տրանսպորտային միջոցը նախօրոք ՀՀ տարածք ներմուծած լինի, այն դեպքում, երբ նա դեռևս չունի «...տեղափոխված անձ...» ճանաչվելու փաստը հավաստող փաստաթուղթը և մաքսատուրքի վճարներից ազատվելու կամ արտոնություն տրամադրելու մասին ՀՀ լիազոր մարմնի թույլտվությունը: Ըստ իս, այս ոչ իրավաչափ պահանջով ավելորդ ֆինանսական բեռ է դրվում հայրենադարձի վրա, այն էլ այն դեպքում, երբ հայտնի չէ նրա դիմումը հետագայում կբավարարվի թե ոչ: Ի դեպ, մեր շահառուն ֆինանսական կորուստ չունեցավ, քանի որ նա իր ապրանքը և տրանսպորտային միջոցը նախապես չէր ներմուծել Հայաստան:

**Այսպիսով**, ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն ոլորտի իրավական ակտերի առանձին դրույթներ տեղիք են տալիս տարընթերցումների, ոչ միանշանակ ընկալման և մեկնաբանությունների, իսկ արդյունքում, խնդիրներ են առաջանում թե հայրենադարձի, թե պետության համար, ուստի դիմում և խնդրում եմ Ձեզ:

- ՀՀ կառավարությունում քննարկման առարկա դարձնել հայրենադարձության գործընթացը պարզեցնելու և դրան նպաստող պայմանների բարելավման ու իրավական ակտերի լրամշակման կարգի հարցերը,
- հանձնարարել ՀՀ պետական լիազոր մարմիններին լրամշակել հայրենադարձների շահերից բխող իրավական ակտերի նախագծեր և ներկայացնել ՀՀ կառավարություն և ՀՀ ազգային ժողով,
- հանձնարարել ՀՀ հյուպատոսական մարմիններին՝ հայրենադարձության գործընթացի մասին մատչելի լեզվով իրազեկման թերթիկներ մշակել և տարածել մեր Սփյուռքի հայրենակիցների շրջանում,
- վերացնել այն խոչընդոտներն ու կասեցնել այն սահմանափակումները, որոնց առջև այսօր կանգնած են մեր հայրենադարձները:

Կհամաձայնվեք ինձ հետ, որ ՀՀ կառավարությունը պետք է դյուրին և գրավիչ դարձնի այն իրավական գործընթացը, որը մեր հայրենադարձ-հայրենակցին հնարավորություն կտա առանց խոչընդոտի և սահմանափակումների ՀՀ ներմուծել իր անձնական օգտագործման իրերն ու տրանսպորտային միջոցը (առկայության դեպքում):

Ակնկալում եմ ստանալ Ձեր արձագանքը սույն հիմնախնդրի վերաբերյալ:

Կից ներկայացվում են՝ ----- թերթ:

Հարգանքով՝

Լևոն Ներսիսյան  
Գործադիր տնօրեն